№ 36 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1894 № 36

ԱՓԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԳԻՐ

„ՇԱՒԻՂԸ“ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները [5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԳԻՐ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանք:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են դրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում՝ Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Զուղայում՝ Յովսէփ Բարսէղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկզբունք եւ անձնաւորութիւն—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուրբաթ օրուայ ժողովը. Նամակ Նոր-Զուղայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. „Դէյլի Նիւզ“ լրագրի կարծիքը. Արտաքին լուրեր.—Ֆելիէտօն.—Յայտարարութիւններ:

ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Դեռ շատ ժամանակ պէտք է անցնի նախ քան մեր հասարակութիւնը կարողանայ պարզ և որոշ գաղափար կազմել սկզբունքների վերայ, ոգևորուիլ նորանցով, զեկավարուիլ նորանցով և դատել ազգային կեանքի մէջ ամեն երևոյթ՝ ըստ սկզբունքների և ոչ անձնաւորութեանց տեսակէտից:

Ոչ մի ժամանակ գուցէ աւելի բուռն, աւելի դայթակղելի կերպով սկզբունքները չեն զոհուած անձնաւորութիւնների ինչպէս վերջին օրերս Թէհրանում տեղի ունեցած դէպքերի մէջ:

Ամեն մարդ գիտէ որ մի քանի տարիներից իվեր Թէհրանի հայերի մէջ տիրում է մի տեսակ անզուսպ, անձնական նկատումներից ծնունդ առած պառակտումներ: Ամեն մարդ գիտէ որ մի խումբ անձնաւորութիւններ, մի քանի մարդկանց անունները մատի փաթաթան շինելով Թէհրանի հասարակութեան մէջ վառել են մի հուր, որի հանգցնելը օրըստ օրէ աւելի դժուարանում է, մի հակառակութիւն, որի վնասը տուժում են խեղճ անմեղ մանուկները:

Այս ներքին պառակտումները արձագանք են գտնում մինչև իսկ Էջմիածնում և անթիւ աղերսագիրներ տարածում են Վեհափառ Կաթուղիկոսի աչքի առաջ այդ տգեղ պառակտումների ցնցոտիները, Հայրիկը վշտագնում է լսելով իւր տարակայ հօտի մէջ ծագած անմիութիւնը, և ուղարկելով հայր Այվատեանին որպէս փոխանորդ Պարսկաստանի և Հընդկաստանի առաջնորդութեան, հրահանգ է տալիս նորան աշխատել բառնալ մէջտեղից այդ յիմար հակառակութեան պատճառները, ինքն ևս իւր որբատառ կոնդակով միևնոյն հրաւէրը կարդալով:

Հայր Այվատեան ժամանելով Թէհրան ազգու քարոզներ է խօսում առանձին ա-

ՖԷԼԻԷՏՕՆ

Ուսումնարանները փակուելով մեր քաղաքում կարծես թէ մեր մէջ ամեն բան ուսումնարանների հետ՝ իրանց գործունէութիւնից դադարել են: Դեռ օրուայ խնդիր է մեզ մօտ ապագայ ուսումնական տարեշրջանի համար կազմուելիք ուսուցչական խումբի խնդիրը երկու թաղերի մէջ էլ: Բերդաթաղում քարի տեսչից և վերակացուից անցեալ տարուայ ամբողջ խումբը բոլորն էլ վարձուել են նոյն պայմաններով:

Տեսչին չը վարձելու համար այնքան բաներ է լսւում ժողովրդի բերանից, որ եթէ մէկը հաւաքի և տայ տպագրութեան մէկ լաւ հէքիաթ կը դառնայ: Իսկ նախկին վերակացուն չի վարձուել՝ վերակացութեան պաշտօնը մերժելուն համար: Այն ախտը, որ ամեն հաստատութիւնների մէջ երկպառակութիւնների պատճառ է լինում. այսօր քանի գնում է մեզ մօտ, աւելի և աւելի ծաւալ է ստանում, շատ ամօթ, աւելի և աւելի ծաւալ է ստանում, շատ ամօթ կրել եւ Աստուած գիտէ ապագայում դեռ ինչեր է տեղի ունենալու: Թէ Բերդաթաղի եւ թէ Լիլաւայի հոգաբարձական խումբը այնպէս են կազմուած, որ եթէ չեմ սխալւում, տարուայ վերջը ամեն մի խումբի մէջ թէ մնան՝ երկու հոգի, պէտք է փառք տալ Աստծուն որովհետեւ այն ախտը, որը յոգուածս աւարտելուց միայն պէտք է յայտնեմ, արդէն որոշ տեղ է բռնում երկու խումբերի մէջ էլ, որի առաջը առնելու համար զոհութիւն Աստուծոյ՝ ոչ ոք էլ չի մտածում: Ի հարկէ բացառութիւններ կան: Կարծեմ այս տարի շնորհակալ պէտք է լինինք Բերդաթաղի անցեալ տարուայ ուսուցչական խումբի մէջ տեղի ունեցած երկպառակութիւններից: Իսկ Լիլաւայի ուսուցչական խումբի մասին դեռ որոշ ոչինչ չենք կարող գրել. որովհետեւ խումբը մինչեւ այժմս չի հասել Դավրէժ Կովկասից. այս տարտամ վիճակից օգտուելով՝ մի մի խումբ տիրացուներ իրանց խնամական կապերի շնորհիւ՝ հոգաբարձունների հետ՝ աշխատում են այս տարի տեղ ունենալ Լիլաւայի ուսումնարանում. երկու երեք տարի Դավրէժի փողոցները չափելուց թղթախաղից, արբեցութիւնից ձանձրանալով յետոյ:

Էհ, ինչ կայ, խնամի հոգաբարձու կայ. շատ կարելի է մէկը կամ երկուսը մինչեւ անգամ համոզուած են որ՝ տեղ կունենան այս տարի իրանց առողջութեան եւ բարոյականութեան շնորհիւ??: Իսկ թէ չեն յաջողի՝ ողջ լինի Սալմաստի տեսուչը. Ինչ կայ, քանի որ գերծակներ է վարձում ուսուցչութեան համար, ինչ մնաց մեր տիրացուները, որոնցից ամեն մէկը տասը տարի արդէն ուսուցչութիւն է արել, որոնց աշակերտները ինչպէս լսում ենք ուզում են տասնամեայ յօբէլեաններ կատարելու, իրանց ուսուցիչներին երախտապարտ չը մնալու համար:

Մեր քաղաքում այժմս գոյութիւն ունին երկու գրադարան-ընթերցարաններ՝ մէկը Բերդաթաղում իսկ միւսը Լիլաւայում. վերոյգրեալ ախտից սորանց վարչութիւններն էլ ազատ չեն: Իսկ Բերդաթաղի գրադարանի վարչութեան եւ տեսչի մասին՝ արդէն գրուած է խօսելն աւելորդ է, բայց միայն այնքանը կասեմ. որ ներկայ տեսուչը իւր պաշտօնը ստան-

ռանձին դիմումներ է անում և ջանք է գործ դնում միացնել Թէհրանում գոյութիւն ունեցող երկու Ուսումնասիրաց ընկերութիւնները որոնք սկզբում մէկ, բայց մի քանի տարիներից իվեր երկու մասի են բաժանուած։

Ազգային Ուսումնասիրաց ընկերութիւնը ամեն պատրաստակամութիւն ցոյց է տալիս այդ միութեան համար, և նորա վարիչները ինքնաբերաբար յայտնում են որ եթէ իւրեանց գործունէութիւնը տեղի է տալիս պառակտումների իւրեանք պատրաստ են խմբովին հրաժարուիլ չը նայելով որ դեռ մէկ տարի և կէս ժամանակ է մնացել իրանց պաշտօնավարութեան վախճանին և նոր ընտրութիւններ կատարել տալ։

Դօվլաթի թաղի Ուսումնասիրաց ընկերութիւնը որ չորս տարի առաջ բաժանուեց բուն ընկերութիւնից և առանձին մարմին կազմեց, չուզելով ընդունել հոգևոր իշխանութեան վերահսկողութեան իրաւունքը փոխանակ մի և նոյն անկեղծ և հաշտարար դիրքը բռնելու ինչ որ միւս ընկերութիւնը, ամեն դիմումների պատասխանեց խուսափողական խօսքերով։

Հայր Այվատեան կամենալով մի անգամից վանել տալ ամեն վիճելի խնդիրներին՝ որոշեց մի ընդհանուր ժողով գումարել, ուր երկուստեք եղած գանգատները յայտնուին և միացման համար հիմունքներ վճռուին։

Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովը առանց մի ոչ մի փարանուելու ընկերութեան անդամակցութիւնը ընդհանուր ժողովի հրաւիրեց և աւելի քան 50 հոգի ստորագրեցին խոստանալով ներկայ գտնուիլ։

Ի՞նչ էք կարծում ինչպէս ընդունեց միւս Ուսումնասիրաց ընկերութիւնը այդ հրաւէրը։ Փոխ-ատենապետը մի նամակով դիմում է Հայր Այվատեանին, յայտնելով որ ընկերութեան ատենապետը բացակայ լինելով ընդհանուր ժողովը ոչ կարող է գումարուիլ, ոչ խորհրդակցել և ոչ որ և է փոփոխութիւն բերել ընկերութեան կազմակերպութեան մէջ։

Ժողովին եկած լինելով միայն մէկ կողմի մարդիկ՝ ժողով չը կայացաւ և միութեան խնդիրը մի անգամ ևս ջուրն ինկաւ։

Մեզ զարմացնում է այն, թէ ինչպէս մարդիկ, որոնք խօսում են ընկերութիւնների մասին, սկզբունքների մասին կարող են այդ աստիճան ստորացնել թէ իւրեանց ընկերութիւնը, թէ գործադիր ժողովը, անարգել հոգևոր իշխանութիւնը, ծիծաղել ընդհանուր հասարակութեան քթին, պնդելով որ երբ միանձնաւորութիւն—ատենապետը—պակաս է, իւրեանք ոչինչ իրաւունք չունին։ Ուրեմն ընդհանուր ժողովը մէկ ատենապետի չափ նշանակութիւն չունի՞։

Բայց մենք տեսնում ենք իրողութիւնների խորը, և համարձակ կարող ենք յայտնել այդ հասարակաց դատաստանի առաջ։

Այդ պարոնները իւրեանքէլ համոզուած են որ եթէ ընդհանուր ժողով գումարեն մինչև իսկ իւրեանց կազմակերպած ընկերութեան երեք քառորդը կուսակից կը լինի միութեան, այն ժամանակ իւրեանք չեն կարող այլ ևս խաղալ այն դերը որ այժմ խաղում են, և այդ վախով, չը գտնելով ոչ մի ուրիշ պատրուակ, նոքա արտայայտել են այդ վերին աստիճանի ծիծաղելի գաղափարը թէ մի ընկերութեան ատենապետը բացակայ եղած ժամանակ, ընդհանուր ժողով չէ կարող գումարուիլ։

Թող այդ պարոնները բարեհաճեն մեզ յայտնել թէ իւրեանց կանոնագրութեան քանիերրորդ յօդուածն է այդպիսի մի կանոն պարունակում։

Թող Թէհրանի հայ հասարակութիւնը շարունակէ իւր ներքին պառակտումները, թող մանուկների կրթութեան գործը զոհուի անձնական կրքերի, թող կաթուղիկոսական կոնդակները ծալուին և դրուին թղթապանակների մէջ, թող առաջնորդական փոխանորդը մեկնի Թէհրանից յուսահատ, միայն թէ մենք պահենք մեր դիրքը, պնդելով թէ մենք չենք կարող ժողով հրաւիրել, որովհետև մեր ատենապետը ներկայ չէ։

Եւ դոքա են այսօր ազգային գործերի ղեկավարները!!!։

Ահա այդպիսի կամայականութիւններին վերջ տալու համար է որ հոգևոր իշխանութիւնը պահանջում է վերահսկողութեան իրաւունք։ Ահա այդպէս սանձարձակ ազգային հաստատութիւնների հետ խաղալու համար է որ այդ ընկերութեան վարիչները չեն կամենում ճանաչել հոգևոր իշխանութիւն։

Պէտք կայ այլ ևս ապացոյցների։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՆՑԵԱԼ ՈՒՐԲԱԹ ՕՐՈՒԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Անցեալ ուրբաթ օր Հայր Այվատեանի հրաւէրով գումարուած էր Ս. Գէորգ եկեղեցու սրահում ընդհանուր ժողով։ Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան անդամակիցները և մի խումբ ոչ անդամակիցներ ներկայ էին։ Ժողովի նպատակը լինելով ուսումնասիրաց ընկերութեան երկու անջատուած ճիւղերը միացնել. մէկ կողմի անդամակիցների բացակայութեամբ, նիստը չը կայացաւ և միայն փոխանորդ Հայր սուրբը գոհացաւ մի անգամ ևս խօսելով և յորդոր կարդալով ժողովրդին, որից յետոյ նիստը փակուեցաւ։ Կաշխատենք քարոզի մի քանի գլխաւոր կէտերը ներկայացնել մեր ընթերցողներին։

Հայր սուրբը նախ սկսեց բացատրել մարդկային ընկերականութիւն յարափոփոխ և միշտ աւելի յառաջադիմող վիճակը, և ապացուցանել թէ ինչ կերպով այն ինչ որ տասը տարի առաջ կարող էր գոհացում տալ մեզ, այսօր մեզ անբաւական է։ Մասնաւորելով խօսքը նա այն

մնել է այն սխտի աղդեցութեան տակ...։

Դրադարանը պէտք է խոստովանուիլ, որ բաւականին բարեկարգուել է ներկայ տեսչի օրոք—աւելացել են բաւականի նոր գրքեր կազմուել է դրամպլուիս բայց ինչ արած սխտը....։

Իսկ Լիլաւայինը, Աստուած հեռի անէ, այնքան յառաջադիմել է, որ Արօրի օրացոյցը եւ դորա նման շատ գրքեր դրել է վիպական բաժնում։

Տեսուչը դրադարանի արդէն 5 ամիս առաջ կազմուած արձանագրութեան հիման վերայ, վարչութեան հետ միասին արդէն ուսումնասիրել է կանոնագրութիւն, ներկայացրել է ընդհանուր ժողովի քննութեանը, որը հաստատել է տուել եւ արդէն առաջնորդւում է նոր կանոնագրութիւնով, որի մէջ, թէ տեսուչը, թէ քարտուղարը, թէ գանձապահը եւ թէ մատենապահը ինքն է նշանակուած։ Մեզ մընում է շատ շնորհակալ լինել դրադարանի ներկայ տեսչից, միայն պէտք է անկեղծը խոստովանենք, որ սա էլ զերծ չէ մեր քաղաքում տիրող սխտից. էհ,ինչ անենք, մոդայ է՝ խնամիս հոդաբարձու է, ամեն ինչ կարելի է....

Չը մոռանամ յիշել այս տարի մեր քաղաքում կազմուած Ընթերցասիրաց ընկերութիւնը, որի նպատակն է ժողովրդական զրադարաններ բանալ Ատրպատականում։ Այս օրերս մեր ձեռն անցաւ յիշեալ ընկերութեան կանոնագրութիւնը, որը աչքի անցկացնելով՝ գտայ բաւականի նպատակայարմար։ Ընկերութիւնը արդէն ձեռնարկել է Դաւրէժում ժողովրդական զրադարան բացելուն եւ շատ կարճ ժամանակում կարողացել է բաւականի դրքեր ձեռք բերել։ Վարչութիւնը շատ մեծ եռանդով աշխատում է իրան յանձնուած գործը առաջ տանել, բայց նորան պակասում է հասարակութեան աջակցութիւնը։ Ի հարկէ Բնդաթաղի ներկայ հոգաբարձութիւնը՝ չի հետեւել իւր նախորդներին. կը տայ այսպիսի հաստատութիւններին բէմը ծրի՝ իբր խրախուսանք մեր քաղաքումը եղած բարեգործական ընկերութիւնների։ Այդ, պարոններ ձեր կազմակերպութիւնը նոր եւ համակրելի լինելով հանդերձ, ինչպէս երեւում է դուք էլ տրամադիր էք մեր քաղաքումը տիրող սխտից վարակուելու։ Հա սիր մի ընկերութիւն էլ մնաց, դա Բարեսիրաց ընկերութիւնն է, որ, ինչպէս երեւում է, լրագրական խօսքին համակրող է առայժմ, թէեւ մի քանի ամիս առաջ սկսեց շեղուիլ իւր ծրագրից, բայց իրա մի քանի իրանց ընկերութեան բարեկամ պարոններից նորանց նկատեցին այդ բանը, յարգելի վարչութիւն զգաց իւր սխալը եւ սկսեց լուրջ կերպով վերաբերուիլ։ Բայց արդէն մեզ մօտ մոդայ դառած սխտի հոտը ինչպէս երեւում է սրանց էլ է կպել։

Աշխատել ապացուցանել սխտի զոյութիւնը մեզանում՝ կը լինէր աւելորդ, որովհետեւ չեմ կարծում դուրս գայ մէկը, որ ասէ սուտ է, մեր մէջ չը կայ այդ սխտը. այդ սխտից զերծ չէ մինչեւ անգամ լուսաւորուած Եւրոպան ուր մնաց Դաւրէժը։ Ի հարկէ Եւրոպան ունի մենք էլ պէտք է ունենանք կասեն մեր ընթերցողները։ Բայց սիր, պարոններ Եւրոպան ճարն էլ ունի, իսկ դուք ինչ ունիք։ Ընթերցող սպասիր ինդրում եմ իսկոյն կասեմ թէ ինչ է այդ սխտը.—դա մեղանում՝ արմատացած փառասիրական ու եսամոլական սխտն է, որ առաջանում է մեր հասարակական հիմնարկութիւնները ղեկավարող մարմինների բռնակալական ձգտումներից։

Ինչ դաբման ունենք սորա դէմ։

Դաւրէժ Մ. Շ.

գաղափարը յայտնեց որ Թէհրանի մէջ եւս օր աւուր ընդհանուր հասարակական պահանջներն աւելանալու վերայ են, և թէ յառաջադիմութեան դէմ քայլել կը նշանակէ՝ աշխատել ամեն բան պահել իւր հին և անփոփոխ վիճակի մէջ։ (Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ։ Խմբ.).

Խօսելով դպրոցական վիճակի վերայ հայր Այվատեան մի առ մի թուեց այն բոլոր առարկաները որոնք մի կանոնաւոր միջնակարգ դպրոցի համար անհրաժեշտ են, և որոնց ուսուցումը կարօտութիւն ունի լաւ և հմուտ ուսուցիչների, և թէ շատ պարզամտութիւն է հարկաւոր սպասելու համար որ այդ բոլորը մի միակ ուսուցիչ աւանդէ, և թէ մի մարդ չէ կարող համայնագէտ լինել։ Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ։

Խօսելով առարկաների աւանդման ձևի վերայ՝ հայր Այվատեան նկատեց որ, օրինակ, աշխարհագրութեան աւանդումը պէտք է կենդանի ձևով լինի և հետևելով նոր մեթոդների, որ աշակերտը պէտք է կարողանայ մտքով պատկերացնել և գրատախտակի վերայ նկարել այն երկիրը քաղաքները որոնց մասին խօսվել է, ոչ թէ հարց ու պատասխանով մի քանի չոր ու ցամաք անուններ միմեանց ետևից շարել։ (Հրաւիրում ենք համայնագէտ ուսուցիչ պ. Յ. Գասպարեանի ուշադրութիւնը այդ տողերի վերայ)։

Խօսելով պատմութեան աւանդելու ձևի վերայ՝ հայր Այվատեան պատմեց թէ ինչպէս իւր մանկութեան ժամանակ ուսուցման եղանակը նախնական և անկատար է եղել։ Ուսուցիչը մեզ նշանակելով ասում էր նա, մի տեղ գրքի միջից՝ մեզ պատուիրում էր այս ինչ տողից մինչև այսինչ տողը անգիր անել, և հետևեալ դասին մենք պէտք է թուտակի նման յետ կրկնէինք մեր անգիր արածը։ Այլ է այժմեան մեթոդը, երբ ուսուցի չը խօսակցելով և աշակերտի հասկացողութեանը յարմարեցրած չափով և լեզուով աւանդում է պատմութիւնը, աշխատելով հետաքրքրելի դարձնել աշակերտին պատմական նիւթը։ Երևի հայր Այվատեան տեղեկութիւն չունի որ ամբողջ 17 տարի դասագրքից անգիր անելու սիստեմով են սովորեցրել Թէհրանի մէջ բոլոր առարկաները, այն բացառութեամբ միայն որ դասագիրք՝ էլ չը կար, և դորա տեղ ծառայում էր միայն ուսուցչի ձեռքով պպտրաստուած հասարակաց տետրը, ուր ամեն մի դաս բաղկացած էր մի 10—12 տողից, որ աշակերտը պէտք է անգիր անելով իւր դասը պատրաստէր, և երբ ջանքեր եղան այդ հնադարեան ձևերը բարեփոխելու այն տեղից սկսան այն վէճերը որոնք այսօր այնքան արծարծուել են։

Հայր Այվատեան թուելով այդ առարկանները կամենում էր հասկացնել Թէհրանի հասարակութեան որ մի կանոնաւոր դպրոց ունենալու համար՝ հարկաւոր են հինգ վեց ուսուցիչներ. հինգ վեց ուսուցիչները ունենալու համար՝ հարկաւոր է բաւական դրամ, և այդ դրամը կարելի է ձեռք բերել միայն երբ միացած ոյժերով գործեն, ոչ թէ Թէհրանի հայերի ունեցած արդէն սուղ միջոցները երկուսի բաժանելով։

Մենք այդ բոլոր կէտերի մէջ համաձայն ենք հայր սուրբի հետ, միայն թոյլ ենք տալիս նկատել որ մարդիկ, որոնք եօթն ութը տարուայ սարսափելի վիճաբանութիւններից յետոյ՝ մի մազաչափ անգամ չեն շեղուել նախկին հնադարեան սիստեմներից, մի երկու քարոզով չեն փոխել իրանց դասաւանդութեան մեթոդները, և թէ հարկաւոր է աւելի լուրջ ուշադրութեան առարկայ դարձնել հասարակաց կրթութեան գործը, և թոյլ չը տալ որ տեղից շուտ վեր կացողը ինքնահնար ծրագրով, ինքնահնար լեզուով և ինքնահնար մեթոդներով աւանդի ինչ առարկայ որ հաճելի է իւր բարի կամեցողութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ռաշտ 5 սեպտեմբերի 1894

Թոյլ տուեցէք ձեր լրագրում, յայտնել ի գիտութիւն „Շաւիղի ընթերցողներին թէ որպիսի զեղծումներ և անկարգութիւններ են պատահում տեղւոյս ազգային գործերի մէջ։

Ռաշտի երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը, երկսեռ դպրոցների գոյութիւնը, պահպանելու համար, դիմում է Ռաշտի Ընթերցասիրաց և Թատերասիրաց ընկերութիւններին, որ նորանցից իւրաքանչիւրը, 250 ղռան, իրանց կողմից նպաստ տան երկսեռ դպրոցներին,

Թատերասիրաց ընկերութեան խորհրդի նախագահը, այդ բանը առանց յայտնելու վարչութեան անդամներին, առանց նիստ գումարելու և արձանագրութեան մատեանի մէջ մտցնելու, ինքնակամ տանում և 250 ղռանը յանձնում է դպրոցի հոգաբարձութեան։

Արդ, արդարութիւնը պաշտպանելու համար բողոքում եմ պատուական „Շաւիղի„ միջոցաւ այդ պարոնի դէմ։ Ի՞նչ իրաւամբ էք դուք առանց վարչական անդամների բարեհաճ կամքը իմանալու, ձեզ թոյլ տալիս գործադրել նեղութեամբ հաւաքած փողերը, ձեր քէֆի համաձայն։

Անցաւ այն ժամանակը երբ ռաշտեցիք ձեր կապրիզներին հնազանդում էին։

Վարչութեան անդամ Ա. Յովսէփեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻՑ

—

3 սեպտեմբերի 1894

„Շաւիղը իւր 24 համարում Թէհրանայ բողոքականաց Իրան-Բեթել օրիորդաց դպրոցի ուսմանց և հեռաւոր Հնդկաստանից յառաջադիմութեանց մասին խօսելով ուրախութեամբ յայտնած էր թէ դպրոցի պաշտօնական լեզուն որ յառաջ անգղիերէն էր՝ այժմ հայերէն է և բոլոր առարկաներն աւանդւում են հայերէն լեզուով և շատ իրաւամբ յարած էր, թէ թող նորանցից օրինակ առնեն Հնդկաստանի հայ դպրոցներն և Նոր-Ջուղայի Կեդրոնական դպրոցն ուր շատ առարկաներ ուսուցանւում են անգլ. լեզուով։ Այդ մասին ես եւս համամիտ լինելով, „Շաւղի“ ընթերցողների ուշադրութիւնն եմ հրաւիրում իմ քանի նկատողութեանս վերայ։

Յիրաւի անգլիերէնը կամ գաղղիերէնը իբրև եւրոպական լուսաւորեալ ազգերի լեզուներ շատ պիտանի են մեզ հայերիս համար և պէտք է փափագանօք հիւրընկալենք մեր ազգային դպրոցների մէջ իբրև ուսմանց մի ճիւղ կամ լեզուագիտական առարկայ բայց ոչ թէ ամեն ազատական արհեստ և ուսմունք պարտաւոր ենք Նորանց լեզուով և դասագրքերով աւանդելու այն եւս անգլիագէտ ուսուցիչների ձեռքով։ Այլ են ուսանելի առարկաները այլ է լեզուագիտութիւնը և քանի որ թէ Աբարատեան և թէ տաճկահայ բառբառով բազմատեսակ դասագրքեր և մասնագէտ դասատուներ չեն պակասում մեր ազգի մէջ, էլ ինչն է պարտաւորեցնում մեզ միշտ խորթանալ և բարոյապէս ստրկանալ։

Ինչպէս մի նորածին մանկիկ բնական է որ պէտք է իւր մօր կաթով ու գթով սնուի քան թէ դայեակի քանի որ մայրն արդէն ֆիզիգապէս առողջ է, այս նոյնպէս և անհերքելի մի ճշմարտութիւն է որ իւրաքանչիւր ազգի մանուկներն որ ապագայ սերունդներն են կազմելու պէտք է մտաւորապէս դաստիարակուին մայրենի լեզուի հարազատ և ոչ այլազգի խորթ բարբառով, որովհետև նորանց առողջ միտքն ու վառվռուն զգացումներն մանուկ հասակում, անզգայութեամբ ենպատաստուում, և բացի որ չափահասութեան ժամանակ ոչ մի յարգ ու համարում չեն ունենում դէպի իրանց ծնողները այլ զզուելի քամահարանօք և անտարբերութեամբ են վերաբերւում դէպի իւրեանց ազգը։ Կարծեմ „Շաւիղի“ մէջ հրատարակուած Բոմբէյու թղթակցութիւնը մի փոքրիկ ապացոյց կարող է համարուիլ դիտողութեանս։

Եթէ մեր սրտերից արիւն է հոսում տեսնելով որ օտար ուսումնարանները

զուտ անգղիականութիւն են և հայ անմեղ մանուկների թարմ մտքերն և զգայուն սրտերն հալուելով օտարադէմ արձաններ են ձուլուում. որչափ առաւել ցաւալի է երբ ազգային դպրոցն էլ որ քաջ ախոյեան պէտք է հանդիսանայ նորանց դէմ, ինքն ևս, պատուելի հոգաբարձութեան անուշադրութեան շնորհիւ նոյն օտարոտի և ազգավնաս շաւղովն է ընթանում և թէ բարեկամաց ներկայութեան խօսք բացուելով ցաւօք խօսւում է այդ անպատեհութեան վերայ, շատերի գաղափար ու պատասխանն այն է թէ մեր հայերէն լեզուն ու գրագիտութիւն այժմ օգուտ չունին. անգղիերէնն է շահաւէտ և հարկաւոր հայ աշխատելու և տպրելու համար:

Երեք տարի առաջ երբ գեր. Եսայի սրբազան արքեպիսկոպոսն մուտ գործեց այստեղ իւր թեմն և ազգային դպրոցների վիճակն ուշադրութեան առաւ՝ նորին սրբազնութիւնն արդար զայրոյթով բողոքեց այդ անպատեհութեանց դէմ մանաւանդ մի հայ ազգային Կեդրոնական դպրոցի տիրապետող լեզուն անգղիերէն լինելու անճոռնի սովորութեան դէմ, և պատրաստ էր արիապէս դարման տանել այդ անպատուաբեր սովորութեան, սակայն նոյն ժամանակի անգղիերէնի հայ վարժապետն, որ և դպրոցի ներքին տեսուչ էր՝ թէ ինչպիսի՞ վարպետ հնարքով կամ համոզիչ փաստերով կարողացաւ նոյն ժամայն սրբազան առաջնորդի բարի դիտաւորութեանը խոչնդոտն լինել և շարունակել իւր ընթացքն այդ ինքն գիտէ. բայց լմէ ինչ է պատճառն որ մինչև այժըմ ևս նախկին գրութեամբ շարունակւում է և հոգաբարձուները լռում են, մինչև անգամ Ռուսաստանի բարձրագոյն մի ուսումնարանում շրջաւանարտ մի լեզուագէտ ուսուցիչ իւր պաշտօնակիցների խմբի հետ այժմեան անգղիերէն դասատուի ներքին տեսչութեան, ազդեցիկհրսկողութեան ու հրամանին է ենթարկուած, զարմանալի է:

„Կաղնի ինչու կայինը քեզ կտրում է: Որովհետև կսթն ինձանիցէ“: Ուրեմն կաղնի արմատից սկսելով՝ ուսումնասիրենք նորա աճման և պտղաբերութեան ցաւալի հանգամանքն, հետևեալ նամակներով:

Դիտակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի օր գեր. հայր Սահակ Այվատեան պատիւ ունեցաւ ներկայանալու Նորին Կայսերական Վեհափառութեան, Սորխէ-Հիսարի դղեակում: Ունկնդրութիւնը տևել է 20 րոպէ, և Նորին Վեհափառութիւն Շահնշահը յայտնել է իւր բարձր բարեհաճութիւնն իւր հպատակ հայերի մասին: Թարգմանի պաշտօն էր կատարում գեր. միրզա Մարտիրոս խան միրփանջը:

—

Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան նախաձեռնութեամբ Քեռազազ գիւղը ուղարկուած ուսուցիչը, մի մասնաւոր նամակի մէջ հետևեալն է գրում: „Հասնելով այստեղ և ներկայանալով վիճակաւոր քահանայ տէր Եղիային, ես զտայ շատ սիրալիր ընդունելութիւն թէ նորանից և թէ առ հասարակ բոլոր գիւղացիներից: Այս վերջինները ինձ շրջապատելով յայտնեցին իրանց ջերմ փափագը մի ուսումնարան ունենալու, և շնորհակալութիւն յայտնեցին առ ընկերութիւնը և տէր Սահակ հայրը որ Թէհրանից մտածել են իրանց մասին: Գիւղացիները ինձ շրջապատելով խոստանում են բոլոր առաջարկները կատարել, այսինքն մի նոր դետին առնել և մի շնորհքով ուսումնարան կառուցանել: Նոքա կամենում են մինչև իսկ օրիորդաց ուսումնարանևս ունենալ: Գալով շէնքին՝ այնժամանակից երբ Վեհափառ Շահը անցած է լինում այս կողմերից՝ տէր Եղիան յաջողուել է տէրութիւնից 300 թուման շնորհի մի թուղթ ստանալ այնտեղ մի լաւ վարժարան կառուցանելու համար, սակայն մինչև այժմ այդ խնդիրը թերի է թողուել և ջանքեր չեն եղել կառավարական շնորհը ձեռք բերելու համար: Այժմ մըտադիր են այդ խնդրի մասին ևս դիմումներ անել: Սրբազան առաջնորդը արդէն մի քանի կարգադրութիւններ է արել այստեղի դպրոցի մասին, և այս մասին վիճակաւոր քահանայ տէր Եղիային կանչել է իւր մօտ հրահանգներ տալու համար: Քեռազազը մեծ ապագայ ունի: Երբ երկրի նկարագրութիւնը և բնակիչների օրպիսութիւնը գրեմ ձեզ, դուք ևս այդ մասին կը համոզուիք: Լաւ կը լինի որ Ռուսումնասիրաց ընկերութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձնէ այս երկրի վերայ, այսինքն իւր նախաձեռնութեամբ ուսումնարաններ հաստատէ այստեղ և օգնէ գրքերով, դասական պիտոյքներով և այլն: Փող չի ուզում ընկերութիւնից, այլ մանաւանդ իւր բարոյական օգնութիւնը: Յոյս ունինք որ գարնան ուսումնարանի շինութիւնը սկսուի: Զորս հարիւր գիւղացիների համար մի թեթև գործ է մի ահագին շէնք կառուցանել: Հողը ժան է այստեղ և գործը դիւրին“:

—

Լսում ենք որ վաղը կիրակի տեղի ունենալու է ինդաստ Երաժշտասիրաց ընկերութեան մի ազգային հանդէս Վեհափառ Կաթուղիկոսի օծման տարեդարձի առթիւ Դավլաթի թաղի վարժարանում՝ Սկսում է ժամը հինգ ու կէսին:

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„Դէյլի Նիւզ“ լրագրի կարծիքը

—

Չին-ժապոնական պատերազմի առթիւ՝ „Դէյլի Նիւզ“ լրագիրը մի հետաքրքիր բաղդատութիւն է անում երկու երկիրների մէջ, որ Ծարգմանաբար հրատարակում ենք:

Մենք չենք կարող, ասում է նա, մի տեսակ սիւսուութիւն չանել երկու երկիրների մասին: Մեր հոմակրութիւնը առաւելապէս կախում ունի մեր սեպհական ճաշակներից: Չինաստանը մի ուսանող է, մի դրքերի որդ (հետազօտող), մինչեւ անգամ մի սոփեստ: Ժապոնը մի արտիստ է, ծայրագոյն Արեւելքի նկարիչը, բանաստեղծը, պարսիկը: Մենք (Եւրոպան) շատ բան ենք սովորել Ժապոնի արհեստից: Սքանչելի գծագրութեան եւ նոյնչափ բարանչելի կուռնաւորութեան ճարտարութիւնը պատկանում է Ժապոնին: Այն արհեստը որ կարող է փոխադրել շարժումը դէպի պատկեր, նմանապէս պատկանում է Ժապոնին: Մեր ամենալաւ նկարիչներից մի քանիսը խոստովանուել են որ նոքա շատ բան են սովորել Ժապոնից իսկապէս, մի տեսակ խենթ սիրահարութիւն է տիրում մեր մէջ, եւ շատ ուրիշ եւրոպական երկիրների մէջ, դէպի Ժապոնի նկարչական արհեստը: Բայց, միւս կողմից չը կայ մի նկարիչ կամ քանդակիչ որ կարողանայ ասել թէ շատ բան կամ որ եւ է իցէ մի բան սովորած լինի Չինական արհեստից: Մեզ շատ քիչ են հետաքրքրում կամ գոնէ քիչ պէտք է հետաքրքրէին— այն կանաչ վիշապները, կամ տարօրինակ հրէշները կամ նոյն իսկ այն ուռենկար պնակները որոնց համար մենք ունինք մի տեսակ կեղծ սքանչացում: Այնուամենայնիւ, արհեստը, կամ ինչ որ մենք կոչում ենք արհեստ, կեանքի մէջ կշիռ ունեցող միակ բանը չէ: Ամեն բան Ժապոնում ուելի կամ նուազ սիրուն է: Սովորական արեւմուտի ճաշակ. այպարհորդը սիրահարւում է Ժապոնին: Սովորական արեւմուտիճանապարհորդը ոչ մի կերպով չէ սիրահարւում Չինաստանին, Ժապոնում ամեն բան մարդուս դրաւում է, մարդուս հմայում է կանայք այնքան սիրուն են, այնքան փոքրիկ, այնքան շնորհալի, այնքան ընդունակ հետեւողներ են այրերը եւրոպական քաղաքակրթութեան: Չինաստանի մէջ դեռ եւս մեծ ջանք է գործ դրւում օտար բարբարոսների շաւիղներից հեռու մնալու: Միւս կողմից ժամանակակից պատմութեան մէջ չը կայ մի զրինակ այն արագ փոփոխութեան, որով Ժապոնը հազաւ արեւմտեան քաղաքակրթութիւնը որպէս մի հանդերձ: Մէկ շաբաթ Ժապոնը ժապոնացի էր, միւս շաբաթ նա եւրոպացի դարձաւ: Մինչդեռ Չինաստանը մինչեւ նոյն իսկ այսօր իւր բոլոր ջանքը գործ է դնում դուրս մնալու համար այն շարժումից որ ծդտում է դէպի Արեւմուտքի սովորութիւնները եւ բարքերը: Ժապոնը արդէն ունի պարլամենտական եւ երեսփոխանական հաստատութիւններ: Չինաստանը դեռ չէ բաց արել իւր դռները Արեւմտեան քաղաքակրթութեան առաջ:

(Կը շարունակուի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լոնդոն 14 սեպտ. Հասած լուրերի հիման վերայ Կորէայի հարաւային կողմի, բոլոր բնակիչները Ժապոնացիների վերայ յարձակուել են և երկու հազար Ժապոնացիների, որոնք Սրուլի վերայ քալելու մտադրութեամբ ցամաք էին ելել, ճանապարհը ամեն կողմից կտրել են միայն 800 հոգիները հաղիւ կարողացել են կոտորածից ազատուիլ և Թուղան վերադառնալ:

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ